

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվանը 6 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են միմյանի նամակները մեզ:

(Պատրաստողները գիտում են ուղղակի
Тифлис. Редакция "Маск")

Խմբագրատունը բաց է առաջօրե 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարությունները ընդունվում են ամեն շաբաթ:

Հայտարարությունների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՒՆԱՆԻՍՏԻՆ

Անգլիա և Հայաստան... Նախքան տեսնել
թիւնը: Նամակ Ալեքսանդրապոլից: Նամակ Ղար-
սից: Նամակ Վրացիականից: Նամակ Խաղաղության
նամակ Խաղաղության: Ներքին լուրեր: Արտաքին
տեսնել թիւնը: Սահմանադրություն և հայն: Ֆրանսի-
սիա: Ամերիկա: «Մշակ» հեռագրեր: Յայտարար-
արություններ: Բանասիրական: Մահը որպէս
հասարակական գործիչ:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայոց խնդրի յարուցվելու քո-
պէից մինչև այսօր ոչ մի պետու-
թիւն չէ խաղացել Հայաստանի
վերաբերութեամբ այնպիսի կեղ-
ծաւոր և երկդիմի դեր, ինչպէս
Անգլիան:

Մի կողմից, նայելով Անգլիայի
մէջ կասկած Հայաստանին համա-
կրող բազմաթիւ քաղաքական մի-
տինգներին, անգլիական մամուլի
մէջ գրվող Հայոց ազգին համա-
կրող անթիւ յօդուածներին, նա-
յեւրով անգլիական դիպլոմատիայի,
Մեծ - Բրիտանիայի պետական
մարդիկների կողմից Հայերին տը-
ված ջերմ խոստումներին, վերջա-
պէս աչքի առնել ունենով Հայաս-
տանին համակրող այն բարձրա-
հնչուն ձառերը որոնք անվեցան
անգլիական պարլամենտում: Կա-
րելի էր կարծել որ Անգլիան բո-

լոր եւրոպական պետութիւններից
ամենից շատ է համակրում Հա-
յաստանին, միակ պետութիւն է,
որ պէտք է անկեղծ կերպով օգնէ
թիւրքաց Հայաստանին մոնղոլա-
կան անտանների լուծից ազատվե-
լու համար...

Իսկ ուրիշ կողմից նոյն Ան-
գլիան Բերլինի կոնգրեսի ժամա-
նակ Հայաստանի ամենամեծ թըր-
քամի էր հանդիսացել աւելի ան-
հաշտ թիւնամի, քան թէ մի քա-
նի երկրորդական պետութիւններ,
որոնք կոնգրեսից առաջ անտար-
բերութեամբ էին վերաբերվում
դէպի Հայերը: Այդ բաւական չէ.
Հայերին արտաքուստ համակրող
Անգլիան իր Կ. Պոլսի դիպլոմա-
տիական ներկայացուցչի օգնու-
թեամբ աշխատում էր վնասել
Հայերին, նրանց յարգը վայր գցել
բարձրաձայն խոստովանել մահ-
մետականների գերազանցութիւնը,
նրանց նախապաշտել Հայերին...

Համակրական միտնդներ Ան-
գլիայում և միւս կողմից Բեր-
լինի կոնգրեսի ժամանակ անգլիա-
կան ներկայացուցիչների անհոգի
վարմունքը դէպի Հայերը: պար-
լամենտի մէջ յօդուած Հայերի աս-
ված ջերմ պաշտպանողական ա-
տենաբանութիւններ, — և միւս

կողմից Այսպիսի, այդ նախկին
Հայասէր անգլիացի ուսումնականի
անամթ ինտրիգաներ թիւրքաց
Հայերից պահանջված ինքավարու-
թեան դէմ... Ահա Անգլիայի
երկդիմի, ահա նրա ստոր և ա-
նարժան քաղաքականութիւնը...

Եւ այժմ շարունակվում է նոյն
քաղաքական անամթ կատակեր-
գութիւնը... Մինչև որ պարլա-
մենտի մէջ լորդ Կարնարվոն յայ-
տնում է թէ Բ. Գուդը չէ կա-
տարել իր յանձն առած պարտա-
ւորութիւնները Հայաստանի վե-
րաբերութեամբ, — Կ. Պոլսի ան-
գլիական ներկայացուցիչ պաշտո-
նապէս մերժում է Հայաստանին
ինքնավարութեան ամենասկզբնա-
կան իրաւունքներ, բացասելով Հայ
պատգամաւորութեանը Հայաս-
տանի մէջ Հայ նահանգապետի
նշանակելը...

Թող վերջապէս հասկանան
թիւրքիցի Հայերը թէ ինչ ար-
ժէք ունեն Հայաստանի վերա-
բերութեամբ անգլիական ազգի
համակրական ցոյցերը, երբ այդ
ցոյցերը ուրիշ բան չեն, եթէ ոչ
մի դիմակ արեւելքի բրիտոնեա-
ների վերաբերութեամբ անգլիա-
կան պետութեան կողմից բռնած
անսիրտ, անմարդասէր և նենգա-

ւոր քաղաքականութիւնը ծածկե-
լու համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

9 յունիսի

«Մշակ» 69 №-ում կարդացելով «Ալեքսանդրա-
պոլից» տարագրութեամբ մի փոքրիկ նամակ, մե-
զանից 15 տարի առաջ կազմված մի բարենպա-
տակ ընկերութեան վերաբերութեամբ: Պ. Նամա-
կագիրը ասել էր որ ընկերութիւնը դադարել է 76
թվին և ընկերութեան 600 լուրի գումարը մնա-
ցել է մինչև ցայսօր մի հոգևորականի և մի աշ-
խարհականի մօտ... այն: Բոլորովին ճշմարիտ է
և այս բանը շատերին յայտնի է: Ամենքն էլ կար-
դացին, լաւ պարզ հասկացան և կողմնակի ձևերով
հասկացրին յիշեալ հոգևորականին էլ. բայց տե-
րայրը դեռ ևս անտարբեր է և կարծես ձեռնառած
է իրան բոլորովին անտեղիկ այդ ընկերութեանը:
Իսկ ևս որպէս լաւ ծանօթ այդ ընկերութեան, էլ
երկար չեմ կարող սպասել որ պ. «Ալեքսանդրա-
պոլից» միւս անգամ բացատրի ամեն բան, ինչպէս
խոստացել էր իր նամակի վերջում, այլ պարտա-
կանութիւն եմ գտում ամենայն ինչ պարզ ի պար-
զօր բացատրելու: 600 լուրի անդամական գումա-
րը գտնվում է բարեկրօն նորմալ Պետրոս
քահանայ Մատնիշեանի և ուրիշից: Զա-
րութիւն Մկրտչեան Մկրչեանցի մօտ, որոնք
ընկերութեան անդամները ցրվելուց յետոյ, յի-
շեալ գումարը շահնջելու դիտաւորութեամբ պա-
հել են իրանց մօտ: Այն գումարը 200 լուրով
էլ գտնվում է յիշեալ Պետրոս քահանայի անը-
մաստաւ Մկրտչի Գալստեանցի մօտ: Կարծեմ առ-
այժմ այսքան բաւական է, էլ մութ բան չը
մնաց: Տեսնենք տեղ-Պետրոս հայր կրկին տեղիք
կուտայ մեզ խօսելու թէ ինչը հրապարակու կը
բացատրէ, թէ ինչու ցրվեցաւ ընկերութիւնը,
յիշեալ գումարը իր տոկոսով որքան է եղել, այդ

աչքի առնել ոչ մի հասարակական փոքր ի շատե-
համապատասխան ձևերից: Նույննայով մի
ընդունելի ֆորմուլա, որի օգնութեամբ կարողա-
նար լուծումն տալ հասարակական կեանքի մէջ իր
առնել ներկայացող հոգեբանական բաղադրեալ
խնդիրը, — սպանում է իր հերոսին, իսկ շատ ան-
գամ երկու, երեք իր գործող անձնաւորութիւննե-
րից և այսպիսով լուծում է անընդունելի հոգեբանա-
կան խնդիրը:

Թողնենք հոգեբանական ընտելութիւնը, թողնենք
բանասիրական գրականութիւնը, թողնենք դիմադր-
և պօքիւս, թողնենք վերջապէս թէօքիւս և դիմադր
իրական կեանքին:

Վերադառնալով այնպիսի հաստատութիւն, ինչպէս
կեղեցական ամուսնութիւնը: Երբ ամուսնու-
թիւնը, երկու սեռի, երկու անդամների մէջ կապ-
ված այդ ընկերակցութիւնը անաշուղ, գծադր-
վում, — գտնել է արդեօք մարդկութիւնը մի ձևա-
կերպութիւն, մի փոքր ի շատե- ամենքի, մի փոքր
ի շատե- բաւականացուցիչ ֆորմուլա ընկերակցու-
թեամբ կապված երկու անդամներին էլ միմեանցից
անկախ կեանքը: Նրանց իրաքանչիւր անհատական
վիճակը ապահովելու: Ոչ, գրեթէ միակ միջոցը
դարձեալ մահն է, այսինքն ընկերակցութեան ան-
դամներից մէկի մահը:

Եւ այդ համոզմունքը, որ միայն մեծը կարող է
դարման անել գծադրութեամբ, լինաւ տալ պար կա-
պն պատճառով բաղադրեալ և անտանելի դարձած
հասարակական կապին, այնքան պարտաւորած է
մարդկային ուղեղի մէջ, որ երկու ամուսնունքը,
որոնք սխալվել են, որոնք քանի մի տարուց յետոյ
համոզվել են թէ միմեանց հետ ապրելով փոխա-
դարձ գոբաղդութեան պատճառ են դառնում,
անդամաւոր են անում փոխադարձապէս ի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՅՐՈՐԴ ՆԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ
մեզ իր ցրմանով: Սկզբնական ցրման ցրմանով
— անց ցրման ցրման ցրման ցրմանով, ինչպէս
— անց ցրման ցրման ցրման ցրմանով, ինչպէս
— անց ցրման ցրման ցրման ցրմանով, ինչպէս

Հասարակական անկատար կազմակերպութիւն
ունեցող մարդկային հասարակութիւնների մէջ
մահը մի մեծ հասարակական դեր է խաղում:
Մահվան դիմում է հասարակութիւնը այն ժամա-
նակ, երբ չը գիտէ ինչպէս գործածէ, ինչ բանին
գործ դնէ այն կամ այն իր կարծիքով աւելորդ կամ
վնասակար ոյժ...

Սկսելով վարկերի հասարակութիւններից: Յայտնի
է որ երկրագնդի վրա բնակվող վարկերի ցեղերից
շատերը սպանում են իրանց համայնքի ծերացած
երկու սեռի անդամներին: Վարկերի ցեղի մէջ ծեր
կիներ, կամ ծեր մարդը ապարդիւն ոյժ է, որ չէ
կարող ոչ աշխատել, ոչ որսի կամ պատերազմի
գնալ, մի և նոյն ժամանակ աւելորդ բերան է, որ
ուտում է համայնքի ուտելիքների պահարկէն մի
մասը... Հասարակութեան համար որ և է օգուտ-
էտ կերպով գործ դնել այդ սպանված ոյժը, —
անհնարին է, ուրեմն պէտք է հեռացնել նրան,
սպանել նրան: Նոյնպէս յայտնի է որ վարկերի ցե-
ղերից շատերը սպանում են պատերազմի ժամանակ
իրանց ձեռքը ընկած զինվորներին:

Այդ արդէն հասարակական զարգացման աւելի
բարձր աստիճան է, երբ վարկերի ցեղը չէ սպա-
նում իր պատերազմական զինվորներին, այլ պահում
է նրանց որպէս սարուհիներ, գործածելով այդ
տարակներին համայնքի հարկաւոր ծանր աշխա-
տանքների կատարելուն...

Երբ որ մարդկային հասարակութիւնը իր հնա-
ցած հասարակական կազմակերպութեան տեղ, իր
հին հասարակական մի որ և է հաստատութեան
տեղ դեռ չէ գտել հին կազմակերպութիւնը կամ
հին հաստատութիւնը փոխարինող մի նոր, աւելի
կատարեալ, աւելի բաղադրեալ, աւելի ժամանա-
կակից և մարդկային կազմակերպութիւն և
հաստատութիւն, — այն ժամանակ նա դիմում է մա-
հապարտութեան, որպէս միակ հասարակական մի-
ջոցի, այս կամ այն հասարակական ցաւին, այս
կամ այն կատարված յանցանքին առաջն առնելու
համար:

Մի մարդ մի յանցանք է գործում: Մինչև որ
հասարակութիւնը չէ հասել զարգացման այն բարձր
աստիճանին, որ յանցաւորի դէմ գործ դնի ուղղիչ
միջոցները, նա դիմէ միայն մի միջոց յանցաւորին
ընդհանրութեան համար անվնաս դարձնելու, — այն
է դատապարտել նրան մահվան պատժին, այսինքն
մահվան միջոցով հեռացնել յանցաւորին հասարա-
կութեան շրջանից:

Բայց մարդկային հասարակութիւնը զարգանում
է, կատարեալագործվում է և աւելի կատարեալ,
արդար, աւելի մարդասէր և բաղադրեալ է դարձ-
նում իր հասարակական կազմակերպութիւնը: Եւ
այն քրեական յանցաւորին էլ չեն սպանում, այլ
աշխատում են ուղղել նրան, հիմնում են ուղղիչ
բանտեր, որտեղ յանցաւորի վրա աշխատում են
ազգէն, զարգացնել նրան մտաւորապէս և բարո-

յապէս, սովորեցնել նրան որ և է արհեստ, որ և է
մասնագիտութիւն, մի խօսքով հեռացնել նրան հա-
տարակներից միայն ժամանակաւորապէս, որպէս
զի նա ուղղվել, դարձեալ պիտանի լինի հասարա-
կութեան համար, որպէս զի հասարակութիւնը չը
կորցնի մի աշխատող ոյժ, մի հաւատարմ քաղա-
քացուն...

Մեզ շատ հեռու կը տաներ բացատրել այստեղ
ընկերացողին թէ ուղղիչ բանտերի ինչ տեսակ դա-
նազան սխտանմաներ կան Եւրոպայում և Ամերի-
կայում, և այդ սխտանմաներից որն է նախապաշա-
ւելի. յանցաւորների առանձնական կամ ընկերակա-
ն բանտարկութիւնը, — մեք միայն ընդհանուր դա-
տարկութիւն անելով, կուզենային յիշել այն բոլոր
դիպուածները, երբ մարդկային հասարակութիւնը,
խոստովանելով իր անընդունակութիւնը, իր թու-
լութիւնը, իր մտաւոր և բարոյական անպատրաս-
տութիւնը, իր կազմակերպութեան անկատար լի-
նելը, — նայում է մահվան վրա, որպէս հասարա-
կական միակ միջոցի վրա, համայնքը կամ հասարա-
կութիւնը վնասակար և աւելորդ ոյժերից ազա-
տելու համար:

Բայց անդադրեցած մարդկային հասարակութեան
մէջ ոչ թէ միայն յանցանքի վերաբերութեամբ
մահը համարվում է հատարակական անհրաժեշտ
գործիչ, բայց և շատ ուրիշ դիպուածներում նա
միակ գործնական միջոց է համարվում բաղադրեալ
հասարակական հանգամանքներից եւր զանաւոր հա-
մար:

Վերադառնալով օրինակի համար, բոլոր լուսաւոր-
ված ազգերի պօքիւս, բնական և արհեստական
խտորձակաւ գրականները, բանասիրութիւնը... Հենց որ
հնդկական, բանասիրութիւնը իրական է հասարակական
բարոյ, խնայած հանգամանքների մէջ, չուսմանով

